

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
Տ. ԱՐՏԱՎԱԶԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՅՈՒՐՄԵՅԱՆԻ

Փարիզից ստացված հեռագիրը գուժեց
Եվրոպայի թեմի կաթողիկոսական պատվի-
րակ գերաշնորհ տեղ Արտավազդ արքեպիս-
կոպոս Սյուրմեյանի ողբերգական մահը, որ

դեցին կորցրեց իր հավատարիմ եկեղեցա-
կանին, իսկ հայագիտություն՝ իր անխոնջ և
ջանասեր մշակին:

Հոգեկույս սրբազանը ծնվել է 1889 թվի



տեղի է ունեցել սույն թվի սեպտեմբերի
27-ին, կարճատև հիվանդությունից հետո:

Արտավազդ սրբազանի անսպասելի մահը
ծանր կորուստ է Հայոց եկեղեցու համար:
Արտավազդ սրբազանի մահով Հայոց եկե-

մայիսի 16-ին Ակն քաղաքում (ներա մկրտու-
թյան անունն է Տիգրան): Սրբազանն իր
նախնական կրթությունն ստացել է Կոս-
տանդնուպոլսի Արամյան դպրոցում, ապա
շարունակել Ղալաթիայի կենտրոնական

վարժարանում և Սկյուդարի Պերպերյան վարժարանում և ավարտել 1908 թվին:

Ուսանողական շրջանից սկսած նա ձրգտում է գրական գործունեության՝ աշխատակցելով «Մաղիկ Մանկանց», «Փուռ» և «Արևիկ» թերթերին: Դպրոցն ավարտելուց հետո, նա սկսում է հրատարակել նախ «Քնար Հայրենյաց» և ապա «Մասուն» գրական-գեղարվեստական հանդեսները: Միաժամանակ նա զբաղվում է մանկավարժական աշխատանքով՝ սկզբում որպես դասախոս, իսկ հետո՝ տեսուչ՝ Բիելջիկում և ապա Էսկիշեհիրում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, 1918 թվին, զինադարձի հենց առաջին իսկ օրերին, համազույլալը ձեռնադրվում է վարդապետ Գնեկ եպիսկոպոս Գալեմբյարյանի կողմից՝ վերանվանվելով Արտավազդ: Նույն տարին առաջնորդական փոխանորդի պաշտոնով մեկնում է Գոնիա՝ կառավարելու Աֆրոն-Կարաճիսարի և Էսկիշեհիրի միացյալ վիճակը:

Հոգևորական ասպարեզ մտնելու առաջին իսկ օրերից, խիստ ծանր ու դժվարին է եղել Սյուրմեյանի ուղին: Չորս և կես տարվա պատերազմից, տարագրումից, բանտներից ու աքսորավայրերից, սովից ու հիվանդությունների ճիրաններից ազատված, քաղցած ու կիսամերկ հայ հատվածի վրա, նրան կորստից ազատելու համար, անհրաժեշտ էր բացառիկ ուշադրություն դարձնել: Եվ երիտասարդ վարդապետը անում է իր հնարավորություն գերազույնը:

Եկեղեցական բարձրագույն իշխանությունը, գնահատելով նրա նվիրվածությունն իր ժողովրդին, հատուկ կոնդակով լանջախաշ կրելու իրավունք է շնորհում նրան:

Շուտով սակայն Արտավազդ վարդապետը շատերի հետ ձերբակալվում է որպես բաղադական հանցավոր և ձմռան ցրտաշունչ եղանակին աքսորվում է Կարին: Աքսորում նա մնում է մոտ երկու տարի:

1923 թվի սկզբներին, Արտավազդ վարդապետը, օգտվելով թյուրքական կառավարության ընդհանուր ներման հրովարտակից, վերադառնում է Կոստանդնուպոլիս ու լծվում ազգային-եկեղեցական, բարեգործական-խնամակալական աշխատանքների, միաժամանակ վերցնելով իր վրա մի քանի եկեղեցիների քարոզչի պարտականությունը: Նույն

թվին ստանում է ծայրագոյնության աստիճան, իսկ 1924 թվին ընտրվում է Բերիայի (Հալեպ) թեմակալ առաջնորդ և մեկնում իր թեմը: Այստեղ նա մեծ հաջողությամբ, շուրջ տաս տարի, վարում է այդ պաշտոնը, արժանանալով բոլորի գնահատությանը: Հալեպի առաջնորդության տարիներին է, որ Արտավազդ վարդապետը Կիլիկիո Սահակ կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է օծվում, ինչպես նաև արժանանում արքեպիսկոպոսության տիտղոսի ու պատվի: 1945 թվին նա գալիս է Էջմիածին՝ մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովին և Ամենայն Հայոց կաթողիկոսի օծմանը: Վերադարձին, խանդավառված իր նվիրական Հայրենիքով, հայրենասեր սրբազանը գրում և հրատարակում է իր հուշերը՝ «Դեպի Հայաստան» խորագրով:

Եկեղեցական աշխատանքին զուգընթաց նա հայագիտական խոշոր գործ է կատարել: Հալեպում, լից տարի շարունակ, հրատարակել է «Տարե» տարեգիրքը: Առանձին գրքով հրատարակել է մի շարք ուսումնասիրություններ, որոնցից արժեքավոր են՝ «Պատմություն Հալեպի հայոց» եռահատոր աշխատությունը, «Պատմություն Հալեպի ազգային գերեզմանաց», «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի Քառասուն Մանկանց եկեղեցվո», «Մայր ցուցակ հայ ձեռագրաց երեսաղեմի վանքի», «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու» և այլն:

Սյուրմեյանն ունի նաև տեղագրական աշխատություններ, ինչպիսին են «Դաւաւսկոս», «Պաղրասի բերդը» և այլն: Խոշոր երկասիրություն է նաև նրա «Համայնագիտական քննադատական բառարան Ս. Գրոց» պատկերավար գիրքը:

Հանգուցյալը Մայր Աթոռ Ս. Էջմիածին համալսարանում և նվիրված հոգևորականներից էր, որի համար և սիրված ու հարգված էր նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Վեհափառ Հայրապետի կողմից:

Երկնային հանգիստ հայ ժողովրդի և Հայ եկեղեցու հարազատ զավակ, Մայր Աթոռին նվիրված եկեղեցական, բեղմնավոր հայագետ ու գրչի մշակ հայրենասեր Արտավազդ արքեպիսկոպոսին:

